իւրեանց չար գործն չյանդիմանուի։

Սակայն նա դարձեալ ենթարկուած է նորա աղ-դեցութեան, զի ոճիր մի գործելէ յետոյ՝ իւր ճանապարհը որոյ մօտէն կանցնի, ակամայ խղճի խայթով պիտի տանջուի։

Մի կարծէք, ընթերցողք, թէ ձեզ վերացական բաներ կը խօսիմ. նոյն իսկ ժամանակաւ աւազակութեամբ պարապող անձերէ լսած եմ։ Հանգստարաններն, որ օտար և վայրագ ազգի մի վերայ այդչափ կազդեն, այլ դու կարող ես դուշակել թէ Բազրևանդայ հայն ինչեր կը յերիւրէ, քուրդն երբ—«այն ժամանակ երբ կանցնիմ հայոց դամբարաններու մօտէն, կարծեմ թէ որոց մէջ հանգստացող մարդիկ կենդանի են և զիս կը նախատեն, ամօթ կը կարդան վերաս և անէծք կտան». հայն ևս բառեր չգտնէր նկարագրելու, կարճ կը վերջացնէ, «Հայոց օր թագաւորութեն կէր, Ալատաղն էր, էն գերեզմիններ, էն վանքեր թագաւորութենի բան ին»։

Արդ եթէ դու հայ ես և ունիս հայ աւիւն, գիտես պատմութիւն, թռիր անցիր հին դարն. տես ուր ես ոտ դրած, ինչ սխրալի սուրբ գործեր կատարուած են այս վայրի մէջ և դու պիտի կարծես շուրջդ հայութիւն կը բուրէ, սակայն երբ աչքերդ շուրջդ դարձնես, հայութեան նշոյլն անգամ չպիտի գտնես, պիտի չգտնես մի հայ որ «հայր մեր» ասէ գոնէ կարևոր գերեզմաններէ միոյն վերայ [1]։

---

1. Կարգ մի գիւղերու՝ որպիսիք են, Կրագոլ, Կօլասօր, Կեռակեռաս, Քօշք եւն. գիւղօրէից մէջ դեռ 1840—50 թուականներուն հայեր կային եւ 1880 թուականին սովոյն անցած եմ Սոֆեան գիւղն, ուր տեսած եմ 15 տան չափ հայեր, իսկ այս օր որոնք եւս չկան։